

Ծառից ծառ ցատկոտելը կարող է ողբերգական ավարտ ունենալ

Մարգարյան Սուրեն Թ.

պ.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)
sargsyansuren@yandex.ru

EDN: VHLNOC

*Բարությունը միակ զգեստն է, որը երբեք չի հնանում
Հենրի Թորո¹*

Ամառ է: Թե՛ դրսում և թե՛ արտաքին ու ներքին հարթակներում սաստիկ շոգ է: Չնայած դրան ազգովին Վարդավառ տոնեցինք: Միմյանց լավ ջրոտեցինք, համով ուտեստներ ու խմիչքներ էլ վայելեցինք: Մակայն հետվարդավառային «խումհարն» ու հումոր մեզ չպետք է շեղեն միջազգային բավականին լուրջ օրակարգերից, որոնցում իհարկե շոշափելիորեն առկա են անմիջականորեն մեզ առնչվող մոտ ու հեռու էական հանգամանքներ: Պետք չէ մոռանալ, որ **Երկիր մուրաբայի գարգացումը 21-րդ դարից մտավ վճռական փուլ, հատկապես էներգոպաշարների պակասուրդի հետզհետե խորացման պատճառով:** Դա նշանակում է, որ մեր նման աշխարհագրական դիրք ու տնտեսություն ունեցողները արտաքին ակազնագող վտանգները դիմագրավելու համար պարտավոր են համախմբվել որոշակի ընդհանուր շահեր ունեցող ավելի հզոր երկրների հետ: Կարծում եմ, որ դա հաստատ Թուրքիան չէ, քանզի կրոնական և պատմական այլ հակասությունները թույլ չեն տալիս միավորվել նրա շուրջ: Իրանն էլ չէ: Ով՞ մնաց, դժվար չէ կանխագուշակել: Անկախ պետականություն և այլ անհեռատես բլբլոցները կարող են վտանգել հայ էթնոսի գոյությունը բուն Հայաստանի տարածքում, ինչպես եղավ շատ հին ազգերի դեպքում, որոնք զրկվելով պետականությունից, ցրված են աշխարհով մեկ: Այժմ քան երբևէ, հայ ազգին օդի ու ջրի պես անհրաժեշտ են իմաստուն, կամային, հեռատես առաջնորդներ, որոնք կկազմակերպեն համատեղումը մեզ հայտնի երկրի հետ: Հակառակ դեպքում ծառից ծառ թռչկոտելը կարող է ողբերգական ավարտ ունենալ մեզ համար:

Երրորդ անկախ հանրապետության պատմությունը ցույց տվեց, որ իր իսկ հոգեկերտվածքով հայր պատրաստ չէ անկախ պետականության, բայց նաև պահպանելով ինքնությունը կարող է և չճուլվել այլազգիների մեջ, ինչպես դա եղավ հյուսիսային Կովկասի մի շարք ժողովուրդների դեպքում: Կարևոր է նաև, որ մեր կեղծ հայրենասերներն իրենց անհիմաստ քարոզներով ու պաթոսային ելույթներով չշեղեն մարդկանց, զուսպ լինեն ու իրատես, դուրս գան ծաղկաբոժոժում քնածի երանելի ճոճքի վիճակից, քանի որ ես վտանգներ եմ տեսնում, որոնք անտեսանելի են նրանց: Հասկանան, որ իշխանությունն ինքնին, լոկ մարդկանց կողմից իրենց կամքը կատարելու համար ընտրված միջոց չէ և հավասարապես հակված է խաբելու իր հրամանով գործող մարդկանց և խաբվելու նրանց կողմից: Որ քչերը՝ հերոսները, հայրենասերները, մարտիրոսները և ճշմարիտ բարենորոգիչներն են միայն, որ խղճով են ծառայում պետությանը և հաճախ անհրաժեշտության դեպքում ընդդիմանում են իշխանության խախտումներին, որի համար էլ հաճախ պետության թշնամիներ համարվում:

Իրապես վտանգավոր է, պատմությունից դասեր քաղելու և մեր գոյության բազմաթիվ սպառնալիքների դեմ միասնական պայքար մղելու փոխարեն՝ տրվել ենք իշխանատենչ կռիվների, գաղափարախոսական պառակտումների և ազգային հոռետեսության: Այս ներքին պառակտումը ոչ միայն բարոյախոսական խնդիր է, այլև ռազմավարական արկածախնդրություն և շատ վտանգավոր ռիսկ: Ապրում ենք մի տարածաշրջանում, որտեղ շրջապատված ենք մեր հանդեպ հարձակողական քաղաքականություն վարող թշնամի և անտարբեր հարևաններով, և մեր մեջ նկարագրային նստվածք տվող անմիաբանությամբ քայքայում ենք ոչ միայն մեր ազգային ուխտն ու հայկական պետականությունը, այլև վտանգում մեր պատմական հայրենիքի վերջին մնացորդները՝ ներկայիս Հայաստանն՝ իր 29743 քկմ տարածքով:

Այո, հայրենիքի ամենամեծ սպառնալիքը մենք ինքներս ենք՝ մեր հայրենաբանդ անմիաբանությամբ: Ազգովի կանգնած ներկայիս աշխարհաքաղաքական պայթյունավտանգ մարտահրավերների առջև, երբ Հայաստանը բոլոր կողմերից գտնվում է քաղաքական, տնտեսական և սահմանային սպառնալիքների ներքո, առավել ակնհայտ է դառնում խորքային և գուցե նույնիսկ ամենակործանարար վտանգը՝ հայ ժողովրդի անմիաբանությունը: Այն դրսևորվում է միմյանց հանդեպ անվստահությամբ, դժգոհությամբ, բազմաբնույթ մեղադրանքներով և նույնիսկ ինքնակործան հիվանդագին

¹ **Հենրի Դեյվիդ Թորո** (1817 - 1862), ամերիկացի գրող, բանաստեղծ, բնագետ, զարգացման քննադատ, պատմաբան և նատուրալիստ փիլիսոփա:

ատելությունը՝ ոչ միայն Հայաստանի ներքաղաքական և հասարակական կյանքում, այլև համազգային մակարդակում՝ սփյուռքի ողջ տարածքում:

Ճակատագրական կամրջի կենտրոնում կանգնած ազգ իմ, այս պահին քո մի եզրին թուրքն է, իր մեծ թուրանի մուրհակով, պահանջատեր թշնամուղ հետ մերձ, մյուսում՝ սառնասիրտ ռուսը: Սահմանային ճանփաբաժան է: Մյուսիքը քո դարպասն է, միջանցքը՝ գոյիդ արժանապատվությունը: Չզիջես: Արցախը հիշի՛ր: Ուժեղացի՛ր: Եթե պիտի երկու պարտադրանքներից ընտրես մեկը, անբեկանելին, զնա դեպի առավել շահեկանը, հարիր մեր ազգայինին: Չմոռանա՛ս ցեղասպանվելը, նահատակներին, նրանց արյունը մինչ օրս դեռ չի չորանում: Մյուս ուղին՝ երկրորդը, փշապատ է, բայց առավել հստակ ու մխիթարական: Գնա, զնա՛ դեպի այդ անհայտը, որտեղ հույսի մոռացված սերմերը գուցե և դեռ ոչ ցեցակիր՝ կարող են ծյարծակվել: Իսկապես, ժամանակի հրամայականը մեզ թելադրում է, կամա-ակամա նոր պառակտումների տրվելու փոխարեն, ինքնաքննության լուրջ վերլուծության ենթարկել մեր գոյությունն ու գործունեությունը՝ մեզ սպառնացող բոլոր մարտահրավերների դեմ միջազգային հանրության աչքին ազգային միահամուռ կեցվածքով ներկայանալու համար: Առանց ազգային ծրագրի, առանց տեղականի և համազգային բարձրագույն նպատակներ իրականացնելու կամքի դրսևորման՝ մեր հայրենիքի, պետության և ընդհանրապես հայ ժողովրդի ապագա գոյությունը վտանգված է:

Ներքաղաքական առողջ պայքարը կարևոր է պետության զարգացման համար, քանի որ գաղափարների բախումից ծնվում են լավագույն լուծումներ: Սակայն կան կարմիր գծեր, որոնք անհրաժեշտ է հարգել: Պատմությունը, ներառյալ Հայոց պատմությունը, ցույց է տալիս, որ երբ ներքաղաքական պայքարը վերածվում է անհաշտ թշնամանքի, դա հաճախ օգտագործվում է արտաքին թշնամիների կողմից՝ պետությանը վնասելու համար: Ուստի, իշխանության համար մղվող պայքարում անթույլատրելի է խախտել այդ սահմանները, քանի որ դա կարող է սպառնալ պետության անվտանգությանն ու գոյատևմանը:

Սովորաբար որևէ համակարգ, հասարակություն կամ պետություն չեն կարող բովանդակային զարգանալ, երբ դրանց մեծ ու փոքր կառավարողները իրենց կողքին չեն հանդուրժում իրենցից ավելի արդյունավետին, նախաձեռնողին, ստեղծագործին և այլն: Սովորաբար նրանք իրենց շուրջը հավաքում են իրենցից ավելի միջակներին: Հայաստանում, ցավոք, գրեթե միշտ տիրապետում են եսակենտրոն հարաբերությունների ձևերը կյանքի ցանկացած ոլորտում, որոնցում կառավարումը հիմնված է ավելի շատ հակադրությունների ու մեկը մյուսին բացառելու, քան ներառական ու համադրությունների վրա: Ամենավտանգավորն այն է, երբ այս իրավիճակը ձևավորվում է կրթության ոլորտում ու կրթությունը սկսում է դիտվել ոչ թե հանրային, ընդհանուր ներառական շահի տեսանկյունից, այլ վերածվում է իրար բացառելու, մեկը մյուսին ոչնչացնելու պատրաստ եսասերներով լցված մի հանրային բեմահարթակի, որից ուղղակի սկսվում է հասարակության ու պետության կազմալուծման գործընթացը: Ամեն ինչ սկսվում է այն պահից, երբ մարդկային գոռբայության հաշվին կրթության դաշտ են խցկվում մեծ թվով դիլետանտներ (ոչ հմուտ՝ աղքատիկ գիտելիքներով մասնագետ), դասավանդման, դպրոցի ու դասի կառուցվածքներից անտեղյակ կամ կիսատեղյակ մարդիկ, որոնք ստանձնում են ստեղծել մի բան, որն իբր նոր ու նորարար է, սակայն դրա ստեղծման ձևն ու ձևաչափը արդեն իսկ նոր ու նորարար չէ: Իսկ սա ինչի՞ է հանգեցնելու: Սա բերելու է այն բանի, որ նրանց ստեղծածը բացառելու ու ոչնչացնելու են այն ժամանակ, երբ կգան նոր, մեկ այլ գույնի եսասեր կառավարողները: Եվ այդպես շարունակ, Սիզիփոսի պես...

Յուրաքանչյուր ժողովուրդ ապրել է ու կապրի, եթե խելացի, բանիմաց ու հայրենասեր սերունդ դաստիարակի: Այսինքն, կրթությունն է ազգի շարունակականության կարևոր նախապայմանը: Սակայն ակնհայտ է, որ վերջին տարիներին այդ բնագավառն ուղղակի հայտնվել է փորձարարների փորձության դաշտում: Եթե շատ արագ չսթափվենք ու չշտկենք սեն ու ստվերն այդ դաշտում, ապա աննախադեպ հնարավորություն կընձեռենք մեր թշնամիներին ուրախությունից հրճվելու և հանդարտ ընթացքով կճեմենք դեպի անհայտության վիճի...

Տժանա / Հանձնվել է՝ 03.08.2025

Рецензирована / Գրախոսվել է՝ 11.08.2025

Принята / Ընդունվել է՝ 18.08.2025